

ՄՈԿԱՑ ԱՇԽԱՐՀԻ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻ ԶԵՌԱԳՐԵՐԸ

Մոկաց գավառը հնում բաղկանում էր 9 գավառներից, իսկ այժմ ունի միայն չորսը՝ Առանձնակ Մոկք, Ասվանից ձոր, Արքալից գավառ և Արգասովիտ:

Տավուսի լեռները տարածվում են Վանի լճի հարավային մասերում և իրենց լեռնագագաթների, լեռնաշղթաների մեջ սեղմված պահում են մի քանի գավառներ, որոնց թվում և այժմյան Մոկաը:

Լեռնահանգույցի գլխավոր գագաթն է 3 500 մետր բարձրությամբ եղերով լեռը, որից ձգված լեռնաշղթաները բաժանում են Մոկաը իր հարևան գավառներից: Իսկ Մոկաը Շատախից և Սպարհերտից անշատող լեռնաշղթաների բազուները բաժանում են Մոկաը խոր-խոր ձորերի և կիրճերի: Տեղումների առատության շնորհիվ, ամեն մի ձորի միջից գահավիժում են արագահոս մշտահոս գետեր, որոնք իրենց ճանապարհի անցած ձորի կամ բնակավայրի անուններով են կոչվում: Այսպիս, եղերովի ստորոտում կառուցված Փութկու Ս. Գևորգի վանքից ակիզը առնող գետը, որ հոսում է հյուսիսից հարավ և անցնում է Մոկաց կենտրոնով, և գետը, և ձորը կոչվում են Փութկու գետ և Փութկու գելի ձոր, արևելքից՝ Առնշի ձոր և գետ Առինշ գյուղի անունով, Նանենից ձոր և գետ Նանենց գյուղի անունով, արևմուտքից՝ Բառա ձոր և գետ Բառ գյուղի անունով, Սեպա ձոր և Սեպա գետ Սեպ գյուղի անունով:

Ամբողջ Մոկաը զուրկ է տափարակներից, հարթություններից և նույնիսկ հովիտներից, բայց հարուստ է արոտավայրերով, ծաղկավետ լեռնալանջերով, անտառներով և պտղատու ծառերով, ակսած ձիթենոց մինչև յուրահատուկ քաղցրահամ տանձը, որն իր տարածված բոլոր վայրերում կոչվում է Մոկաց տանձ:

Հաղորդակցության դժվարությունների և երկրի մեկուսացված լինելու պատճառով, Մոկաց աշխարհը ավելի է հավատարիմ մնացել հին սովորություններին, ավանդություններին, ավելի պինդ է պահպանել իր լեզվի և բարբառի առանձնահատկությունները, հին պատումները, հատկապես Սասունցի Դավիթը իր յոթ ճյուղերով, և բազմաթիվ գրուցներն ու հեքիաթները: Ինչ որ ընկել է այդ խոր ձորերում, պահպանվել է երկար ժամանակ, ինչ որ ստեղծագործվել է Մոկասում, եղել է ինքնուրույն և յուրահատուկ:

Մոկաց աշխարհը հարուստ է նաև անապատներով, հոշակավոր վանքերով, որոնք եղել են հայ մշակութի վառ օջախներ:

Հ. Ղեռնդ Ալիշան իր «Այրարատ» աշխատության Դ գլխում (էջ 428), խոսելով Մոկաց աշխարհի վանքերի մասին, գրում է. «Այլ և մտաւոր բարգաւաճանօք, որպէս տայ գուշակել ներբռող Նարեկացւոյն զԱպարանից Խաչէ, յորում դրուատին եպիսկոպոս նոցին և վանորայքն»: Ալիշանն այդ վանքերի թվում

հիշատակում է Ս. Խաչ վանքը կամ Ս. Կանանց վանքը, Փութկու Ս. Գեղրդի վանքը կամ Սարի Ս. Գեղրդի վանքը, Ս. Ամենափրկիչը, Ս. Փասա վանքը և Սրբոց Վարդանանց վանքը:

Ս. Կանանց կամ Ս. Կարապետի վանքը Մոկաց աշխարհի վանքերից առաջինն է: Այսպես է կոչվում Մելք ձորի գետի ափում Մրկանց գյուղից 1,5—2 կիլոմետր հեռավորության վրա սրբատաշ քարերով կառուցված այս վանքը, որ հնում կոչվել է Ս. Խաչ կամ Մայափի վանք: Վանքի հյուսիս-արևելյան կողմից՝ Բարլակ բարձունքը բաժանում է այն թառա ձորից, իսկ Բարլակից գեպի հարավ իշած բազուկը գյուղից:

Այդ երկու բարձունքներից գեպի հարավ, դեպի Սեպա գետն իջող երկու լեռնաբազուկները հետզետե ցածրանում են և աստիճանաբար մոտենում իրար, և դեռ չհասած Մրկանց գյուղին, ստեղծում են մի նեղ ձոր, կիրած: Եվ այդ կիրճը հարավից, եղրկանը հյուսիս-արևելքից և Բարլակ բարձունքները հյուսիս-արևմուտքից կազմում են եռանկյունաձև մի գոգավորություն, որի մեջտեղ սրբատաշ քարերով կառուցված է Մոկաց աշխարհի հանգույն վանքերից Ս. Կարապետի եկեղեցին իր դարրասով: Դուռն վրա դեռ պահպանված է հետևյալ արձանագրությունը. «ԶՏէր Գրիգոր Չինող եկեղեցայս, զՅովեանեն, զԹումա և զՂազար յիշեցէք, ՊԾէ (1408)»: Եկեղեցուն կից գտնվում է գերեզմանատունը զարդարված խաչքարերով, տապանաքարերով, ծաղիկներով և զանազան տեսակի վարդենիներով:

Բնությունը ոչինչ չի խնայել վանքի շրջապատը շքեղացնելու համար: Վանքի երեք կողմերից գեպի կենտրոն, դեպի վանքն են իջում մի քանի փոքրիկ լեռնային աղբյուրներ, որոնք միանալով վանքից ներքեւ, հնարավորություն են տվել ոռոգելի դարձնելու լեռնալանջերում գտնվող փոքրիկ հողարածինները, վերածելով դրանք ցանովի տարածության, իսկ մնացած մասերը, մինչև բարձունքների գագաթները, ծածկված են անտառներով, պտղատու ծառերով, խոտհարքներով և արոտավայրերով, որոնք առանձին շուրջ ու գեղեցկություն են տալիս վանքին:

Վանքի անտառները, որոնք տեղացիք անվանում են «մերի», մեծ մասամբ բաղկացած են կաղնի ծառերից: Իսկ պտղատու ծառերը, որոնք իրենց շատության պատճառով անտառի տպավորություն են թողնում, բաղկացած են տարրեր տեսակի տանձենիներից և ընկույնիներից: Վերջինները այնքան շատ են, որ ապահովում են վանքին մաքուր ընկույզի

ձեթով: Քիչ չեն նաև սալորի, խնձորի և այլ տեսակի մրգատու ծառերը: Վանքի մոտով անցնող առվակների կողքին բարձրանում են բարդիներ և ուսիներ:

Վանքի բարձր գերբեր, անդորր շրջապատը, ծառերով, ծաղիկներով հարուստ շրջակալիքն է, որ առիթ է տվել գրիչ: Առաքելին 1579 թվականին գրչագրած իր Ավետարանի հիշատակարանում գրելու, «յերկիրս Մոկաց, ի մեծափառ և ի հոչակաւոր, երկնաշանգիստ և վայելու սուրբ ուխտու, որ Սուրբ Կանանց վանք կոչվի»:

Մոկաց վանքերի մեջ առաջինը Ս. Կանանց վանքն է: Բնիկ հայ ժողովրդի մեջ պահպանված ավանդությունները վանքի հիմնադրումը կապում են Հոփիսիմյանց կույսերի հետ, որոնք եկեղեց են Մոկա և օթևանել այժմյան վանքի տեղում, և ի հիշատակ նրանց կառուցել է վանք և անվանվել Ս. Կանանց վանք: Թե երբ է կառուցվել վանքը՝ հայտնի չէ: Հավանական է, որ Ս. Կանանց վանքը մի ժամանակ եղել է և՛ հանքավայր և՛ հանքերի մշակման վայրը: Այդ հանքանյութերը վերամակվել են Սթանց գյուղում և ձորի հանդիպակաց կողմը գտնվող Բոնաշեն գյուղում, որը մի ժամանակ եղել է Մոկաց քաղաքատիք վայրերից և արհեստավորական կենտրոններից մեկը, որի նյութական մնացորդները կան գլուխ ավերակների մեջ և շրջակալիքում: Համենայն դեպք, Ս. Կանանց վանքի վայրը, նախաքրիստոնեական շրջանում, իր բնական գեղեցկությամբ, շէր կարող հարմարավետ կամ օգտակար բնակավայր մինել, և դրա համար էլ Հոփիսիմյանց կույսերի հետ կապված ավանդությունները պետք է կապված լինեն նման մի գեղեցիկ վայրի հետ:

Մեր ձեռքն հասած ձեռագրերից հայտնի է, որ գրչության արվեստը Մոկաց աշխարհում, առաջինը 1306 թվականին սկսվել է Ս. Կարապետի վանքում և ընդհատումներով շարունակվել մինչև 1691 թվականը:

1306 թվականին Մոկաց Ս. Խաչ կամ Ս. Կանանց վանքում գրիչ Վարդանն ընդօրինակում է Մոկաց գավառի առաջին գրչագր Ավետարանը, առանց հիշատակելու իր ծնողների անունները: Պատվիրատվի մասին հիշատակարանում գրում է. «Թէ ո՞վ եղի առիթ կամ է՞ր աղագաւ սուացաւ զսա, Կարապետ սրբայսէր և պատուական քահանայ ի գեղչէ, որ կոչի Ածկոր»: Ավետարանն այժմ գտնը-

<sup>1</sup> Ածկոր անունով գուց Մոկսում և շրջակա հարեվան գավառներում չկա: գուցե ծկոր գյուղն է, որը գտնվում է Կառավարի արևմուտքում, Կառավար գետի սուրբին հոսանքում: Ավշանն ևս Ալրարատ-ի Դ գելիում, 428 էշում, Մոկաց վանքերի հետ թվարկում է նաև Մկորի վանքը:

վում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան գիտահետազոտական ինստիտուտ մատենադարանում, 2806 Համարի տակ:

1379 թվականին, երբ Ս. Կանանց վանքի առաջնորդն էր Տիրացուն, Նահապետ կրոնավորը, Հովհաննես և Կիրակոս վարդապետների պատվերով, ընդօրինակում է «Յաղագու Երկնյալին քահանայապետութեանց Սրբոյն Դիոնիսոսի Արիսպագուոյց գիրքը, թարգմանված Ստեփանոս Սյունեցու կողմից: Գրչագիրն այժմ գտնվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում:

1380 թվականին, վանքի առաջնորդ Տիրացուն, իր եղբայր Ստեփանոսի և իր քեռորդի Հովհաննես կրոնավորի հետ, ածուն գրել զայ (Մարգարէութիւն ծայիշայ և Թուղթք Պաւոսի) եռայիփափաք սիրով, ի վայելումն անձանց իւրեանց և յիշատակ հոգոյ իւրեանց և ծնաղաց իւրեանց...», և հետո ավելացնում է. «Անմեղագիր լերոք, զի ի ձմերանի գրեցաւ և ցուրտ էր տանն»<sup>2</sup>:

1401 թվականին Ս. Կանանց վանքի վահայրն էր Թումա կրոնավորը, որն իր եղբայր Մոկաց եպիսկոպոս Գրիգորի հետ պատվեր են տալիս Խիզանի Ս. Խաչ վանքի միաբան Հովհաննես գրչին գրելու մի Մաշտոց, «ի յիշատակ հոգոյ իւրեանց և ծնողաց իւրեանց և հանգուցեալ եղբօրն իւրեանց Ղազար սարկաւագի»: Գրիշ Հովհաննեսը Մոկաց եպիսկոպոս Գրիգորին բնութագրում է որպես ոգեհրապատիւ և զգերաշնորհ, զառաքելաշնորհն և զնշմարիտ պատկերն Քրիստոսի...: Զեռագիրը Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանումն է, 898 համարի տակ:

1410 թվականին Ս. Կուտանաց վանքն ուներ կազմակերպված միաբանություն: Ավետարանի գրիշ Աստվածատուրը իր հիշատակարանում գրում է. «Արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս այս ի թուականիս Հայոց ՊՄԲ (1410), ի յերկիրս Մոկաց, ի վանքս Սուրբ Խաչ և ի Սուրբ Կարապետի, ի հայրապետութեան Տեառն Դաւթի, ձեռամբ յոգնամեղ և փծուն և անարժան գրչի Աստուածատուրը քահանայի»<sup>3</sup>: Ստացողները եղել են Ղազար և Անտոն քահանա Եղբայրները, «ի յիշատակ հոգոց իւրեանց և ծնողացն»: Հիշատակարանում 36 տողից բաղկացած ոտանավորով գրիշ խնդրում է «ողորմի տալ» իրեն և Ղազար և Անտոն քահանաներին: Գրիշը չի թողել իր ծնողների անունները:

<sup>2</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի ձեռագրերի հիշատակարաններ», էջ 534:

<sup>3</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի ձեռագրերի հիշատակարաններ», էջ 115—116:

. Աստվածատուրի ընդօրինակած Ավետարանից հետո, այլևս մեր ձեռքը չի հասել ոչ մի ձեռագիր գրված Ս. Կանանց վանքում, մինչև ԺԴ դարի վերջին քառորդը, որից հետո «Պահանջումն անարինաց խստանայ ի վերայ քրիստոնէից, և միշտ և հանապազ ի հուման և ի ծորման է աշխարհ ամենայն, և ոչ երբեք հանդիպի դադարման և հետեւ զի ինչք պակասեն, ստացուածք յափշտակին» (Մոկաց, Կայթանց Ավետարան, գրիշ Հովհաննես, 1909)<sup>4</sup>: «Բազում մորմոք և տրումութիւն էին ի վերայ մարդկանց, կոտորեցան անմեղ գառնիք» (Մոկաց, Մպատ վանքի Ավետարան, 1425)<sup>5</sup>:

Եվ այսպես, ոչ միայն Մոկաց աշխարհում, այլև բազմաթիվ տեղերում «Աւետեցաւ աշխարհն ամէն ի անարին թուրքմանէն և Զ (Զ) տարի է, որ պատարագ է եղել ի ծովու բոլորս ամէն» (Թովմա Մեծոփեցի, Մեծոփւ վանք, 1427)<sup>6</sup>: «Զերկիրս Հայոց Աղբակից... մինչև Բաղէշ անմարդարնակ արարեալ: Եւ բնակիչը աշխարհիս մերկ և բոկ և սովալլուկ տարաշխարհիկ եղեալ... աշխարհս մեր աւերակ, և սեղանք և գունք եկեղեցեաց մերոց տապարեալ, և սպասք սրբութեանցն գերի վարեալ և աւրճներգութիւնքն Աստուծոյ լոեալ ի բոլոր երկիրս մեր» (Աղբամար, 1425)<sup>7</sup>: Դրիշներից բերված այս մեջբերումները լրիվ շափով շեն արտահայտում հայ ժողովրդի ծանր կացությունը:

Մոկացի Առինջ գյուղում 1534 թվականին գրված մի Ավետարանի հիշատակարանում անանուն գրիշը գրում է. «Մեծաւ ահիս և դողութեամբ գրեցի յԱւետարանս, քանզի թշնամիք էին միմեանց տէրն Մոկաց՝ և տէրն Զերմաձորոյ և Ոստանին և մերձ և սահմանակից էին միմեանց Առինջ և Զերմաձոր և յորժամ երեկոյ լինէր, ի մտանել արեգական փախչենք ի ծերպս վիմաց, ի ծառատունկս և ի թուփս անկանինք մի յահէ ոչ ոք կայր ի բուն»<sup>8</sup>:

Գրչության արվեստը նոր թափ ստացավ Մոկսում ԺԴ դարի 70-ական թվականներից: 1579 թվականին Ս. Կանանց վանքում գրիշ Առաքելը հանդիս է գալիս որպես գրիշ և կազմող մի Ավետարանի, որն ըստ Ե. Լալայանի, գրված պետք է լինի ԺԵ դարում<sup>9</sup>:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 340:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 361:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 326:

<sup>8</sup> Մ. Նարեկյան, «Արտօնը Հայաստանի», Կ. Պոլիս, 1883, էջ 147—150:

<sup>9</sup> Ե. Լալայան, «Յուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», էջ 535—540:

Ավելատարանի ընդարձակ հիշատակարա-  
նում Առաքել քահանան հանդես է գալիս որ-  
պես զրիչ ու կազմող և երկարորեն խոսում է  
ստացող Խոչա Կարապետի և նրա ծնողների,  
և զբայրների և ազգական կանանց մասին,  
բայց ոչ մի խոսք չի ասում իր մասին:

1581 թվականին Ս. Կանանց վանքում  
Առաքել արեղան գրում է մի «Յայսմաւուրք»,  
որի հիշատակարանում խոսում է իր եղագար  
Ստեփանոս քահանայի մասին: «Յայսմա-  
ւուրք»-ի ստացողներն են Հովհանքի և Մար-  
գարափի որդիներ մահտեսի Տեր Մարտիրոսը  
և Տեր Աղամը<sup>10</sup>:

Ստեփանոս վարդապետը, ի վայելումն  
Կարապետ և պահոպոսի «կը գրէ Ավետարան  
մը ի յերկիրս Մոկաց, ի մեծափառ և հոչա-  
կաւոր անապատիս որ Ս. Կանանց վանք կո-  
չի, ընդ հովանեաւ Ս. Խաչին և Ս. Կարապե-  
տին, ի թվին Ռիւ (1586)»<sup>11</sup>:

1595 թվականին նորից հանդիպում ենք Ս.  
Կանանց վանքում գրված մի Ավետարանի,  
որի գրիչը մեղ ծանոթ Առաքել արեղան է: Նա  
շատ ջանք է գործադրել բարձր կատարելու-  
թյան հասցնելու գրչության արվեստը սույն  
վանքում: 1595 թվականին գրված Ավետա-  
րանը բարերախտաբար անվնաս է մնացել և  
այժմ գտնվում է Մատենադարանի 5437 հա-  
մարի տակ, պահպանված լավ վիճակում:  
Ավետարանի հիշատակարանում գրիչը տա-  
լիս է իր մասին մի քանի տեղեկություններ,  
որից հայտնի է դառնում, որ Առաքելի ծնող-  
ներն են եղել Ստեփանոս քահանան և մայրը  
Խանում, եղբայրը Ստեփանոս քահանա,  
քույրը Ալար և նրա որդին Ներսես կրոնա-  
վոր, և վերջապես պազր Վարդան քահանա:  
Առաքել գրիչը ուսուցիչն է եղել Կարապետ  
Խաթիցին: Այսպես, մեր առաջն է գտնվում  
գրագիտ մի ընտանիք, որից երկու եղբայր-  
ները՝ Առաքելը և Ստեփանոսը, ունեն գրչու-  
թյան վայրը հանդիսացել է «երկնանման և  
լուսանկար անապատս, որ Սուրբ Կանանց  
վանք կոչվի»:

Առաքելի և Ստեփանոսի նախնիքները  
նույնպես զբաղվել են գրչության արվեստով  
և նրանց անունները սերտորեն կապվում են  
Բոնաշեն գլուխի Ավետարանների գրիչների և  
ծաղկողների հետ: Բոնաշենը գտնվում է Ս.  
Կանանց վանքի հանդիպակաց կողմը և վան-

<sup>10</sup> Հայեական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի  
պատմության ինստիտուտ, Մովսես Տեր-Մովսեյանի  
արժիվ, թղթապահակ 21, փաստաթուղթ 62:

<sup>11</sup> Տե՛ս Հ. Ալիքիյան, «Հավաքումն հիշատակա-  
նացն ի հավաքմանն ինքամ էքինդիք»: — Հ. Ալիքյան,  
«Վասպուրական Վանի վանքերը», Գ, էջ 869, Վիեն-  
նա, 1947:

քից անշատվում է Սեպա գետով: Հավանա-  
կան է, որ Առաքել գրիչ նախնիքները Բոնա-  
շենից հրավիրված են եղել Ս. Կանանց վան-  
քը որպես գրիչներ՝ ձեռագրեր ընդօրինակե-  
լու և կամ որպես դասատուներ՝ վանքի աշա-  
կերտներին սովորեցնելու համար գրչության  
արվեստը: 1595 թվականին գրված Ավետա-  
րանի ծաղկող Խաչատուր Խեղացին հիշատա-  
կում է իր աշակերտների անունները՝ «Ղա-  
զարն Վրաստանցուն և Ասլան Վանեցուն»: Ժա-  
գարի վերջին, որպես գրչության վայր, Ս. Կա-  
նանց վանքի և գրիչ Առաքելի անունը ար-  
դեն դուրս էին եկել Մոկացի շրջաններից  
և տարածվել Վասպուրականում և շրջակա-  
րում: Վասպուրականի խոչանները մեծ ուշա-  
գություն էին դարձնում իրենց պատվիրած  
Ավետարանների գրչության արվեստին: 1595  
թվականի Ավետարանի հիշատակարանում  
կարում ենք, որ ստացող Շնորշ Ախիշանս  
ի յերկրին Վասպուրականի, ի աստուածա-  
պահ քաղաքի որ Կոչի Վան..., ետուն զար-  
դարել Ս. Ավետարանս ոսկով ու լածվարտով,  
այլ երանգ երանգ և զանազան գեղատեսիլ  
գոյնով, իդ (24) տնալինականքն և Ժ (10)  
համարաբառքն և զդ (4) աւետարանիշն և  
զդ (4) խորաննը և զմանդր սքանչելագործու-  
թինքն և զթիկերն և զժաղկագրերն և զառա-  
չին տողերն և զահեղահրաշ անուանքն և  
զթիսուս, զթիսուս Տեղան Աստուծոյ մերոյ,  
զամէնն լիապէս ետ ոսկով և լաճվարտով-  
նկարել, զոր լի է առատապէս արժէ Ճ (100)-  
ապատիկ և Ռ (1000) ապատիկ Ս. Ավետա-  
րանս...»: Ավետարանի ծաղկողն է «սուստա-  
նուս» Խաչատուր Խեղանցին: «Եիշեցէք ինձ և  
ծնողաց իմոց և ուսուցանող վարդապետին  
իմոյ Մարտիրոս քաջ փիլիսոփային...»: Խա-  
չատուրը խեղանցի էր և սովորած Խեղանում,  
հայտնի ծաղկող Մարտիրոս վարդապետի  
մոտ, այնուամենայնիվ նա ավելի ծաղկել է  
Մոկում և ավելի շատ աշխատել է մոկացի  
գրիչների հետ, և դրա համար էլ նրա անունը  
սերտորեն կապվում է Մոկաց աշխարհի գրու-  
թյան արվեստի հետ: 1595 թվականի  
Ավետարանը Մոկաց ձեռագրերի մեջ հան-  
դիսանում է հազվագյուտ օրինակներից մե-  
կը: Այս Ավետարանից հետո, դարձյալ շուրջ  
100 տարի Ս. Կանանց վանքից և ոչ էլ Բոնա-  
շեն գյուղից մեր ձեռքը չի հասել ոչ մի ձե-  
ռապիր:

1691 թվականին Մոկասի Մրկանց գյուղում  
գրվում է մի Ավետարան Մխիթար գրչի կող-  
մից, «ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս.  
Գէորգայ զօրավարին»: Մոկան Ավետարանը  
այժմ գտնվում է Մատենադարանում 6083  
համարի տակ:

Մոկան թվականին Մոկաց Բեկնց գյուղում,  
գրիչ Միքայելը իր Ավետարանի հիշատակա-

րանում գրում է. «Եղև շարժ, բազում տեղիք փլան, բազում մարդիկ մեռան, և եղև հեծել շարժութիւն։ Մոկաց պարոն գնաց ի վերայ յՈղմա, և զովսարն թալան եթեր, և յետոյ յանկարծակի եկաւ թոխտան, ի վերայ Մոկաց, ի յայտնութիւն բոլորին զՅիգիձոր այրեցին, բազում աւար հարին, յետոյ Մոկաց ջինալբեկն գնաց զԲոհտանից գիւղորէք աւերեց, զՄեպ կպոց, զեկեղեցին քակեց, զԱգլը-վան թալանեց, զԿճաւ, զՀառչան և զՄակնի հարկատու արար»։

ԺԹ դարի առաջին կեսին, երբ բորբոքվեցին նորից քրդական բեկերի միջն ներքին կոհվները, ժանր հարվածներ ստացան Սեպա ձորի հայկական գյուղերը, այդ թվում և Ս. Կանանց վանքը, որը մնաց խանքարված վհճակում մինչև 1900-ական թվականները, երբ Աղթամարի կաթողիկոսության փոխանորդ Արսեն վարդապետի կողմից վերակառուցվեց։

